

«Ամենալավ հայրիկը» հեքիաթ

Արջերի ընտանիքում յուրաքանչյուր առավոտ նույն կերպ էր սկսվում. փոքրիկ Արչին հայրիկի հետ գնում էր մեղր փնտրելու:

Բայց մի առավոտ արջուկն ասաց.



– Էլի՞ փտի մեղր փնտրենք: Չե՛մ ուզում, հոգնել եմ.. Ավելի լավ է, արի լողանք:

– Մենք ավելի ուշ կլողանք, - մերժեց հայրիկ Արջը, - այն բանից հետո, երբ մեղրը տուն կտանենք:

– Ինչո՞ւ,- հոնքերը կիտեց Արչին:

– Որովհետև այդպես է ընդունված արջերի մոտ: Մենք պետք է ոչ միայն զվարճանանք, այլ նաև մեզ համար սնունդ հայթայթենք:

– Դե որ այդպես է,- թշերն ուռացրեց փոքրիկը,- ես ստիպված ինձ համար ուրիշ հայրիկ պիտի գտնեմ:



Հաջորդ առավոտ, իր հետ վերցնելով ատամի խոզանակն ու սիրելի խաղալիքը, նա փախավ տնից և ուղևորվեց նոր հայրիկ փնտրելու:

Անտառում Արչին հանդիպեց վագրերի ընտանիքին: Վագրիկները ուրախ խաղում էին ծառերի տակ: Արչին որոշեց մտալ նրանց հետ:


«Այսպիսի կյանքը իսկը ինձ համար է», - մտածեց արջուկը:

Նա անվախորեն մոտեցավ վագրին ու հարցրեց.

- Կդառնա՞ք իմ հայրիկը:

- Հաճու՛յքով, - գլխով արեց Վագրը, - մնա մեզ հետ:





– Հիմա մենք բոլորս միասին կգնանք եղջերուների որսի, - հայտարարեց հայրիկ Վագրը: - Լսիր ու հիշիր. սկզբում մենք գնում ենք հետքերով, հոտոտում ենք ու հետևում: Հետո թաքստոցից դուրս ենք թռչում ու բռնում եղջերվին.

– Չէ՛-չէ՛, շնորհակալ եմ, - ձեռքերը թափահարեց Արչին: - Դա ավելի վատ է, քան մեղր փնտրելը: Կարծում եմ, դուք չեք լինի իմ նոր հայրիկը:

Արջուկը վերցրեց իր ուսապարկն ու նորից ճանապարհ ընկավ:

Գետակի ափին ևա հանդիպեց սագերին:

«Ա՛յ սա կյանք է», - մտածեց Արչին՝ նախանձով նայելով փոքրիկ սագերին: - «Նրանք ամբողջ օրը կարող են լողալ...»



Եվ ևա մոտեցավ մեծ Սագին:

- Կդառնա՞ք իմ հայրիկը, - հարցրեց ևա:

- Իհարկե՛, եթե դու ուզում ես, - համաձայնեց Սագը: - Սևա մեզ մոտ, իմ տղաների հետ:

- Դե՛, հիմա բոլորդը դեպի ջուրը, - հրամայեց հայրիկ Սագը: - Մարզումները սկսվում են:

Նա շուռ եկավ դեպի արջուկն ու բացատրեց.

- Սագերը պետք է լավ լողան, դրա համար մենք միշտ մարզվում ենք՝ առավոտյան, ճաշին, երեկոյան:

- Ամբողջ օրը՞...,- վախեցավ Արչին: - Զե՛, շնորհակալ եմ: Դա ավելի

վատ է, քան մեղր փնտրելը: Դուք իմ նոր հայրիկը չեք դառնա:

Փոքրիկը վերցրեց իր ուսապարկն ու նորից քայլեց արահետով:

Մի հարմար խորշի մեջ արևի ճառագայթների տակ տաքանում էր օձերի ընտանիքը:

«Այ իրանց հետ հաստատ անելու բան չի լինի», - ուրախացավ Արչին ու վազեց հայրիկ Օձի մոտ:

– Խնդրում եմ, եղիր իմ հայրիկը, - խնդրեց արջուկը:

– Եսսսսսսսսսսս 2222222222222ատ, ուրախիսիսիսիս եմ, որ դու եկել եսսսսսսսսսս, - շնչաց Օձը: - Տեղավորվիր կողքսսսսսսսսսսսսսսս..

Արչին գնդի պես կծկվեց արևի տակ, բայց շուտով այնպես քրտնեց, որ մորթին թրջվեց:

– Կլիկե՞ք իմ հայրիկը:

– Իհարկե՛, եթե դու դա ուզում ես, - պատասխանեց Արագիլը: - Թռիր այստեղ:

– Ես թռչել չգիտեմ, - խոստովանեց արջուկը:

– Ոչի՛նչ, կսովորես, - նրան ոգեշնչեց հայր Արագիլը ու մի պտուկյա թռավ ափի վրա: – Ուղղակի ինձ հետ կրկնիր, սա դժվար չէ:

Արջին ամեն ինչ արեց այնպես, ինչպես ցույց տվեց Արագիլը ու հայտնվեց ջրում..



ՉԸԼՈՒՄ...



– Օ՛հ, ոչ, ես երբեք չեմ կարող թռչել սովորել, - ջուր կուլ տալով ասաց Արչին: - Սա ավելի վատ է, քան մեղր փևտրելը: Դուք չե՛ք լինի իմ հայրիկը:

Բարկացած Արչին ծանր հոգոց հանեց ու նայեց ծովին: Ու այդ պահին ծովի ջրերի մեջ Կետը շատրվան բաց թողեց. «Ֆը՛շ»:

– Սա ես հաստատ կարող եմ անել, - ուրախացավ արջուկն ու փորձեց կրկնել. - Ֆը՛շ, Ֆը՛շ, Ֆը՛շ..

– Քո մոտ լավ է ստացվում, - ոգևորեց նրան Կետը: - Նույնիսկ ավելի լավ, քան իմ տղաների մոտ:

– Կլինե՞ք իմ հայրիկը, - հույսով հարցրեց Արչին:

– Իհարկե՛, - պատասխանեց Կետը:

– Մենք՝ կետերս, սուզվում ենք շատ մեծ խորուքյան մեջ ու լողում ենք այնտեղ, որտեղ շատ մուր է..- սկսեց պատմել Կետը:

– Բա արևը՞..- զարմացավ Արչին:



– Մոռացիր դրա մասին,- քմծիծաղեց հայրիկ Կետը:- Մենք ավելի շատ սիրում ենք ծովային խորքերը: Ու մենք միշտ մրցում ենք, թե ով ավելի երկար կմնա ջրի տակ:

– Չէ՛, հաստատ չէ՛,- բացականչեց արջուկը:- Դա ավելի վատ է, քան մեղր փևտրելը: Ինձ արև է պետք.. Ներեցեք, բայց ուր իմ նոր հայրիկը չեք լինի:

Բանից դուրս եկավ, որ նոր հայրիկ փնտրելն այնքան էլ գվարճալի բան չէր: Հանկարծ Արչին հասկացավ, թե ինչ էր ուզում: Նա ուզում էր.. մեղր....

«Հերի՛ք է,- ասաց նա ինքն իրեն,- վերադառնում եմ տուն»:

Ու արջուկը թռչկոտելով շտապեց դեպի տուն:

– Հայրի՛կ, հայրի՛կ,- բացականչեց նա հեռվից,- ես եմ, ես վերադարձե՛լ եմ: Եկ գնանք մեղր փնտրելու:

– Ուրեմն դու կանես այն, ինչ անում են բոլոր արջե՞րը,- հետաքրքրվեց հայր Արջը:

– Այո՛, հաճույքո՛վ,- պատասխանեց Արչին:- Իսկ եթե մեղր հավաքելուց հետո ժամանակ մնա, կգնանք լողալու, ճի՞շտ է:

– Իհարկե, որդիս:

Հայր Արջը բռնեց որդու ձեռքը և նրանք միասին գնացին մեղր հայթայթելու:

«Իմ հայրը ամենալավն է»- մտածեց արջուկը:



Հեղինակներ՝ Ռենե Գուլիշու, Ժինետ Հոֆման
Թարգմանությունը Վ. Բուռնուլչյանի